

է. , , Սասնա ծոեր, , վեպի չորս նոր պատում, որոնք ծագում են Արևմտյան Հայաստանից : Դրանցից արժեքավոր է հանկապես Ալշշ-կերտի Մանգասար գյուղի պատումը, մի տեղավայր, որից մինչև այժմ պատումներ հայտնի չեն եղել հայ Վիպազրությանը : Ոնազանական հատկանիշներով այս պատումը ևս նույնական է վեպի ավանդական պատումներին՝ պատմվում է արձակ, մասնակի նրգային հապածներով, նկատվում է նաև տեղայնացման որոշ ճգնում :

4. Վիպական բանահյուսության գրանցումների մեջ կտն նաև նորություններ և զեղարքվածորեն հաջող տարբերակներ : Գրաված են նաև մի քանի հերիտաժներ իրանական վեպի մոտիվներով՝ „Զալ Օղլի Ռոտամ,, , , , Բուռզի,, , , , Խերնեկ,, և այլն :

5. Ժողովրդագիտական ու պատմա-մշակութային առանձնահատուկ արժեք է ներկայացնում Ալեանի ավագանի երգային-պարերգային բանահյուսությունը, որից գրանցված է շուրջ 100 երգ, պարերգ՝ քնագիր խոսքով ու մեղեղիով :

6. Տեղապայրի բանմիջուսությունը հարուստ է նաև բանամասային փոքր ժամաներով /առած-ասացվածք, հանելուկ, օրինանք, աննեծք, աղոթք/ որոնք դարձյալ ծագումաբանորեն խոր հնությունից են գալիս և կենցաղավարում են առ այսօր :

7. Գրաված նյութերի լեզուն Մշո, Ալաշկերտի, Բայազետի, Սալմստի քարբառներն ու խոսվածքն են :

8. Գրանցված են նաև որոշ ազգագրական տվյալներ ու տեղեկություններ, որոնք զարդարում են տեղի ազգաքնակչության հոգեվոր և նյութական մշակույթի մասին :

Վ.Գ. ՍՎԱՐՁՅԱՆ

ՆՇԽԱՐՆԵՐ ՄՐՑՎՄՏԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

1. Պատմական Հայաստանի արևմտահայ հատկածի / Փոքր Հայք/ ընակիչները 19-րդ դ. վերջին և 20-րդ դ. սկզբին քոնությամբ տեղահանվելով իրենց ընթրրանից, սփովել են աշխարհով մեկ :

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատվելուց և հատկապես հայրենական մեծ պատերազմից հետո, նրանց մի մասը ներզաղթել է հայրենիք :

Հաստրակական կեցության նոր պայմաններում աստիճանաբար փոխվում են նրանց հաստրակական գիտակցության ձևերը, նիստն ու կացը, սովորությունները, խոսվածքն ու ավանդական բանահյուսությունը:

2. Անվերադարձ կորսատից փրկելու նպատակով, վերջին տասնամյակում /պաշտոնապես/ վերջին երեք տարում/, զրի ենք առել պատմա-ազգագրական ընույթի նյութեր՝ Մուսալեռից, Արաքիրից, Մարաշից, Կեսարիայից, Էվերեկից, Խարբերդից, Երգնկայից, Սերաստիայից, Դիարբերից, Աղաքաղարից, Պոլսից և այլ Վայրերից գաղթած հայերից:

Նյութերը զրի են առնված Երևանում ու շրջակա թաղամասերում /Շահումյան, Ձեյթուն, Արաքիր, Թղիմախ-գյոլ/, ինչպես նաև Եջմիածնում, Հոկտեմբերյանում և այլ Վայրերում ընակվող մեծահասակ հայրենադարձներից:

3. Բանահյուսական նյութերը գրանցված են քարեազիտական սկզբունքներով, որոշ մեխելիներ նոտագրված են:

4. Հավաքած նյութերի մեջ կան Վիպական ու ընարակուն ընույթի ստեղծագործություններ: Հրաշապատում և իրավատում հեքիաթներում գովերգպում են խելքը, արհեստը, ուսումը և մարդկային առաջինությունները:

5. Հայրենադարձներն ունեն ինքնատիպ, պատկերավոր ու խորիմաստ առած-տացվածքներ, օրհնանքներ ու հանելու կներ, որոնք գաղափար են տալիս նրանց ապրած երկրների ընական, տշնարհագրական միջավայրի, կենցաղի ու սովորությունների մասին:

6. Հայրենադարձների հոգևոր մշակույթն իր քազմագանությամբ ու ինքնատիպությամբ համար համահնչյուն է հայ ժողովրդի արևմտահայ հատվածի պատմական նակատագրին:

Ա.Ս.ՂԱԶԻԹՅԱՆ

ԶԱՐԱՄՅԱԼ, ՄԵԽԱՀԱՍԱԿԱՆԵՐԻ , , ԿԱՍՏԿՈՐ ՄԱՀՎԱՆ , , ՍՈՎՈՐՈՒԹԹԻ ՎԵՐՄՊՐՈՒԽՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐՄԱՍՎԱԿՈՐՈՒԽԸ ԸՍՏ ՀԱՅ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

Հայ ժողովրդական բանահյուսությունը գովածանափառ տվյալներ է ընծեռում զառմյալ մեծահասակների , , կամավոր մահվան, , սովո-